## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Դետերմինիզմի սկզբունքը պատմական զարգացման երկար ժամանակաշրջան է անցել և մինչև օրս էլ մի շարք հարցեր ակտիվորեն քննարկվում են: Գիտնականների և գիտության փիլիսոփաների մի մասը պնդում է, որ պատճառահետևանքային հարաբերություններում էականը իրադարձությունների ժամանակային հաջորդականությունն է. պատճառ երևույթը ծնում է հետևանք երևույթ, որը ժամանակի մեջ հաջորդում է պատճառին: Այսինքն՝ հնարավոր չեն երևույթներ, որոնք ժամանակի մեջ տեղի ունենան ավելի շուտ, քան իրենց ծնող պատճառները: Այս մոտեցումը ծայրահեղության է հասցրել Անգլիացի փիլիսոփա Դ. Հյումը: Նա պնդում էր, որ մենք չենք կարող խոսել երևույթների ծագումնաբանական կապերի մասին, և կարող են ընդամենը հավաստել, որ մի իրադարձություն ժամանակի մեջ հաջորդել է մյուսին: Այս փաստի հիման վրա մենք ասում ենք, որ ավելի վաղ դրսևորված երևույթը պատճառ է, իսկ մյուսը՝ նրա հետևանքը: Այլ խոսքով պատճառի ու հետևանքի միջև ծագումնաբանական կապ չկա, այլ միայն ժամանակային հաջորդականություն: Այս մոտեցումը մի շարք հարցեր է առաջացնում: մասնավորապես, ի՞նչ է կատարվում պատճառի և հետևանքի դրսևորումների միջև ընկած ժամանակահատվածում:

Դետերմինիզմի սկզբունքի մեկ այլ մեկնաբանություն պատճառական հարաբերությունների հիմքում դնում է փոխազդեցության գաղափարը: Եթե կա փոխազդեցություն, ասել է թե՝ ուժ, ապա անմիջապես երևան է գալիս վիճակի փոփոխություն՝ արագացում: Այսինքն՝ պատճառն անմիջապես ծնում է հետևանք և այսպիսով պատճառի ու հետևանքի ժամանակային հաջորդականության խնդիրը վերանում է. նրանք միշտ հանդես են գալիս միաժամանակ: Այս մոտեցումն էլ նոր հարցեր է ծնում: Օրինակ, եթե պատճառն ու հետևանքը դրսևորվում են միաժամանակ, ինչու՞ է միշտ պատճառը հետևանք ծնում և ոչ թե հակառակը: Մեկ այլ հարց. ազդու՞մ է արդյոք հետևանքը պատճառի վրա, թե՞ ազդեցությունը միակողմանի է: